

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Խօսքերու գրութիւն են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբարբաղիք դիմում են ուղղակի
Тифлисс. Редакция „Мусака“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Կացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՒՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մամուլի ազատութիւնը—չէր քին տեսնու-
թիւն: Մի քանի րէպի մեր հեղինակները: Նամակ
Նուսուց: Նամակ Նոր-Բալայից: Նամակ Ղա-
զարից: Նամակ Ջիրայից: Նամակ Ղարաբի:
Արտաքին տեսնութիւն: «ГОЛОСЪ» լրագրի
թղթակցութիւնը: Հայերի մասին: Թիւրքիա: Անգ-
լիա: Մշակիչ հեղինակները: Բայտարարութիւն-
ներ:

ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ռուսաց մամուլը, մանաւանդ
«Вѣстникъ Европы» ամսագիրը և
«Голосъ» լրագիրը, խոսելով ռուս
մամուլին կատարեալ ազատու-
թիւն տալու անհրաժեշտութեան
վրա, յայտնում են այն միտքը, որ
մամուլը Ռուսաստանում մինչև
այժմ այն միակ հասարակական
հիմնարկութիւնն էր, որ ընդհա-
նուր պետական օրէնքների պաշտ-
պանութիւնը չէր վայելում: Նա
մի տեսակ անհարազատ երեւոյթ
էր ռուսաց կեանքի մէջ:

Խաբանչիւր քաղաքացի, ամեն
նամե՛ յանցանք էլ գործելով, այն
ժամանակ միայն կրում է իր պա-
տիժը, երբ դատարանի քննու-
թեան ենթարկվելուց յետոյ զրկ-
վում է կամ մասամբ, կամ կա-
տարեւապէս իր քաղաքացիական
իրաւունքներից: Բաղադրական յան-
ցաւորն անգամ, հրէշաւոր չարա-
գործը, ենթարկվում է միշտ կամ
զենուորական կամ քաղաքական
դատաստանին և յետոյ պատժ-
վում է: Իսկ լրագրութիւնը այդ
իրաւունքները չունի, նա պետա-
կան օրէնքներից դուրս է:

Մի կալուածատէր, մի սեփա-
կանատէր իր սեփականութենից
զրկվելու համար, պէտք է մի նը-
շանաւոր յանցանք գործած լինի,
որի պատճառով նա ենթարկվում
է դատարանի քննութեանը և
դատարանի վճիռը միայն կարող
է զրկել նրան սեփականութե-
նից: Իսկ լրագրագետը, կարող
է ամեն րօպէ զրկվել իր սեփա-
կանութենից, իր ձեռքով հիմն-
ված և իր սեփականութիւնը հա-
մարվող լրագրից կամ ամսագրից,
առանց դատարանի վճիռն են-
թարկվելու, միմիայն վարչական
կարգադրութեամբ:

Լրագրագետը և ոչ մի բանում,

իր հասարակական ոչ մի գործո-
ղութեան մէջ չէ վայելում իր
միւս համաքաղաքացիներին, պե-
տական միւս հաստատութիւննե-
րին հաւասար իրաւունքներ օրէնք-
ների առջև:

Օրինակ մի աննշան յանցանքի
համար լինում են տուգանքներ,
որոնց ենթարկվում են ամեն քա-
ղաքացիները, բայց ոչ մի քաղա-
քացի, ինչքան հարուստ էլ լինէր,
երբեք չէ ենթարկվում օրինակ,
այնպիսի ահագին, աներևակայելի
տուգանքների, ինչպէս մի լրագիր:
Նրեակայեցէք մի լրագիր, որ
ունի 10,000 բաժանորդ, մեծ
քանակութեամբ հատուկ է ծախ-
վում ամեն օր, ունի մեծ արդիւնք
յայտարարութիւններից, բայց ու-
րիշ կողմից ունի և օրական ա-
հագին ծախսեր: Յանկարծ մի
յօդուածի համար վարչութիւնը
արգելում է այդ լրագրին երեք,
չորս ամսով հատուկ ծախվել, կամ
յայտարարութիւններ ընդունելու
իրաւունքից է զրկում նրան: Եւ
ահա լրագիրը երեք, չորս ամսների
ընթացքում վախճան հազար
րուբլու կորուստ է կրում: Նրբ է
տեսնված, ասում է «Вѣстн. Ев-
ропы» ամսագիրը, որ ռուսաց դա-
տարաններից մինը ենթարկէր մի
քաղաքացուն 60,000 րուբլ տու-
գանքի պատժին: Եւ այդ տեսակ
պատժին լրագիրը կամ ամսագիրը
կարող է ենթարկվել երկու, երեք
անգամ տարւոյ ընթացքում:

Ռուս լրագրութեան փափազը
միայն այն է, որ մամուլը են-
թարկված լինի նոյն օրէնքներին,
որոնց ենթարկվում է ամեն քա-
ղաքացի, այսինքն ամեն տեսակ
փոքր թէ մեծ յանցանք գործելուց
յետոյ նոյն դատարաններին են-
թարկվի, որոնց ենթարկվում են
Ռուսաստանի միւս քաղաքացի-
ները:

Մինչև այժմ ռուսաց մամուլը
պետական օրէնքների համար մի
տեսակ խորթ որդի էր: Ռուսաց
մամուլի փափազը այժմ շատ հա-
մեստ և իրաւացի է, նա ցանկա-
նում է որ մամուլը բոլոր միւս
քաղաքացիների հետ հաւասար

իրաւունքներ վայելէր օրէնքի առ-
ջև, ենթարկվէր պրօկուրօրութեան
նոյն պահանջների և դատաստա-
նական նոյն քննութեանը, որոնց
ենթարկվում են Ռուսաստանի
բոլոր միացած քաղաքացիները
ընդհանուր պետական օ-
րէնքներից թե ան պետական օ-
րէնքներից թե ան հիման վրա
և ոչ թէ ինչպէս մինչև այժմ
եղել է առանձնական ապօրինի
զրույթեան մէջ զրկած լինէր, կա-
ռավարվելով մամուլի համար ըս-
տեղծված գրաքննական առանձին
օրէնքների կանոնադրութեամբ և
կախված լինելով միմիայն վարչու-
թեան կամից:

Եւ երբեք ինչ որ փափա-
գում է լրագրութիւնը, ինչ որ
փափագում ենք և մենք՝ հաւա-
սարեցրած լինել մեր իրաւունք-
ների մէջ, ռուսաց բոլոր միւս
քաղաքացիների հետ, ընդհանուր
պետական օրէնքի առջև:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԽՆԴԻՐ ԳԵՊԻ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Որքան էլ թոյլ կողմեր ունենայ ներկայ
հայ ուսանողութիւնը, այնուամենայնիւ ան-
կարելի է ուրանալ այն հանգամանքը, որ նա
իր նախորդ սերունդների հետ համեմատու-
թեամբ մի հօսիական քայլ է փոխել զէպի
առաջ, մի յառաջդիմական քայլ, որ ժա-
մանակի ծնունդ է, որ հետզհետէ զարգա-
ցող կիանքի արգասիք է: Ռուսաստանի հայ
ուսանողութեան մէջ զարթնած սէրը զէպի
իր ազգութիւնը, նրա անուրանալի համակ-
րութիւնը զէպի ազգային կեանքի պայծառ
երեւոյթները, ֆրանսիական ուսանողութեան
առաջին ինքնաձեռնադրութեան քայլը, նրա
դարեւոր թմբուկիւնից սփռվելը, դերմա-
նական ուսանողութեան համախոհութիւնը
նրանց հետ, այդ բոլորը յառաջդիմու-
թեան փառաւոր ապացոյցներ են:

Կոպիտ եսականութիւնը, աւանդական ան-
տարբերութիւնը, ճշմարիտ է, դեռ ունեն ի-
րանց պաշտօնները, իրանց գերիները, բայց
մի տարբ տարի էլ ժամանակ, և կեանքի
հոսանքը կը սրբի խալաւ. այդ բիծը, կը
մշի նրան զէպի անցելը, զէպի պատմու-
թեան շրջանը:

Ուսանողական կեանքի զարգացման նշան-
ներից մէկը անշուշտ այն ուրախակի երեւոյթն
է, որ ուսանողութիւնը մի առանձին հա-
մակրութեամբ է վերաբերում զէպի ազգային
զրախանութիւնը, ձգտում է մինչև անգամ
ներգործական դեր կատարելու նրա զարգա-
ման և յառաջդիմութեան գործի մէջ: Գրա-

կանական ամեն մի նորութիւն՝ թէ լրագիր,
թէ նոր ամսագիր, թէ նոր գրքեր, նոր հե-
ղինակութիւններ մի անասելի ուրախութիւն
են պատճառում ներկայ ուսանողին, նա պարզ
տեսնում է, որ իր փառքութիւն ազգը շատ
հեռու է կորելուց, որ նա ընդհանուր
վերածնունդ է, կարելի է ասել, համարձակ
քարշ է գալիս թէև կաղ ոտով համարձա-
կային քաղաքակրթութեան ընթացքի հետ:
Հայ ուսանողը գալիս է այն համոզմանը, որ
ոչ թէ միայն արժէ հետաքրքրվել հայ գրա-
կանութեամբ, այլ մինչև անգամ բարոյական
յանցանք կը լինի կարողութեան չափ չը նը-
պաստել նրա զարգացմանը: Նա ձգտում է
կարգաւ մայրենի հեղինակներին, տեղեկու-
թիւններ ունենալ գրականական նորութիւն-
ներից, հետեւել գրականութեան զանազան
ճիւղերի յառաջդիմութեանը:

Բայց որքան էլ ջերմեւանդութեամբ նա
ձգտի բաւականութիւն տալու իր ցանկա-
ւորութեանը, դժբաղդապէս նա անկարող է Մօսկ-
վայում, Պետերբուրգում, Փարիզում, Սարագ-
բուիքում ընկած աղքատ ուսանողը լսում է
լրագիրներից որ դուրս է եկել այս կամ այն
նոր գիրքը, նոր հեղինակութիւնը, նա ծա-
րաւում է կարգաւ, քննելու, գուցէ կրիտի-
կա գրելու, բայց անկարող է դառնալ, որով-
հետեւ չունի այնքան նիւթական միջոց, որ
կարողանայ ձեռք բերելու ամեն մի նոր գրք-
վածք: Նա ճարահատեալ ստիպված է լի-
նում սպասել և 4—5 տարուց յետոյ հայրե-
նիք վերադառնալով կարգաւ: Տխուր գրութիւն
է այս, և այդ գրութիւնից է դուրս գալիս
յօդուածի նպատակը՝ իմ խնդիրը զէպի մեր
հեղինակները: Նա դառնում եմ խոնարհաբար
խնդրով զէպի այս վերջինները (եւ լիազօր
չեմ իմ ընկերներից, բայց ծիծաղալի կը լի-
նէր ի հարկէ, եթէ նրանց վերաւորէր այս
խնդիրը) — եւ խնդրում եմ, որ նրանք աչքի
առաջ առնեն ուսանողութեան այդ անյար-
մար դրութիւնը և եթէ ցանկանում են ա-
ւելացնելու իրանց գրուածների հասկացող
կարողացողների թիւը, չը խնայեն մի մի օրի-
նակ իրանց գրքերից ուղարկել ճիւղաբար այս
կամ այն համալսարանական քաղաքը, ինչպեղ
կան հայեր: Մեր լրագրութիւնը հասկացել է
ուսանողների այդ դրութիւնը՝ «Մշակ», «Մե-
ղու» և «Պատկ» ստացվում են գոնէ Մօսկվա-
յում մի քանի օրինակ ճիւղաբար — թող մեր
պատուելի հեղինակներն էլ հետեւեն այդ գե-
ղեցիկ օրինակին: Ինչպէս Մօսկվայի ուսանող,
եւ ի հարկէ առանձնապէս կը խնդրեմ իմ
այստեղի ընկերների համար: Գրքեր կարելի է
ուղարկել ուղիղ համալսարան մի որ և է ու-
սանողի անունով՝ սա կը կարգայ և կը տայ
ընկերներին: Ամեն մի ստացած գրքի համար
շնորհակալութիւն կը յայտնվի լրագրում:
Կը սպասե՛ք...

Ս. Գաղեանց

ՆԱՄԱԿ ՆՈՒԹԻՒՆ

22 յուլիսի

Եթէ խաբանչիւր քաղաք մի բանում չորք
ունի, Նուխին, պէտք է ասած, այդ կողմից ա-
մենից առատ է վարձատրված: Նուխին բաղմա-
կողմանի չորքների կենտրոն է: Անգլիական, չա-
րագործութիւն, աւաղակութիւն, մարդասպանու-
թիւն, սառնարութիւն, անտարբերութիւն, քա-

Հառնական կարգով ձեռք պատռական լրագրի մեջ վաճառողական եղանակը անտեսելի ներդրումները, և նույն համար եղած նույն-րատուութիւնները կարող Ս. Լուսաւորչեան զըզ-րոցի աշակերտներն պարտք համարեցինք յե-լը միայն այդ սրբազան պարտականութիւնի և անհրաժեշտ գործից, և թէ նուիրատուութեամբ հաւաքած, և թէ նոյն դպրոցի աշակերտաց ունեցած ընկերութեան փողոց երեսուն բոլոր ուղարկու-մանը ձեռք միմապատուութեան, և խնդրում ենք, որ բարեհաճեք ընդունել մեր այս չնչին նուէրը, և հասցնէք ուր հարկն է, իսկ նուիրատուաց աշակերտներին ձեռք պատռական թերթի մեջ մի ան-կիւն շնորհէք, ի ճակեցութիւն նոյն աշակերտաց որք են: Միայն Ղարապուտեանց 2 ր. 20 Կ., Աղէքսանդր Խանաւորեանց 1 ր., Յովհաննէս Սաղաթիւեանց 1 ր., Վարդգէս Եսայեանց 1 ր. Մկրտիչ Դոսեփեանց 1 ր., Ջուրաք Ապաճեանց 1 ր., Արեւն Զոյկեանց 1 ր., Յարութիւնեան Գեորգ 1 ր., Ղազարեանց Մկրտիչ 60 Կ., Յովհաննէսեան Գեորգ 60 Կ., Սարգիսեանց Մուշեղ 50 Կ., Աստուխեանց Գեորգ 50 Կ., Դոսեփեանց Համա-զասպ 40 Կ., Տէր-Յովհաննէսեանց Մանուկ 40 Կ., Էջմուղեանց Սենեքերիմ 25 Կ., Ղուկասեան Սաղաթիւ 25 Կ., Դուրդարեանց Յարութիւն 2 Կ., Փաշաճեանց Մարտիրոս 20 Կ., Մելքոնեան Բարսեղ 20 Կ., Մատգանչեանց Պետրոս 20 Կ., Վարդանեանց Արամ 20 Կ., Ղազարեանց Կար-պետ 20 Կ., Մատինեանց Յովհաննէս 20 Կ., Տէր Խաչատրեանց Վարդ 20 Կ., Մուրադեանց Մի-

լիքսեթ 20 Կ., Տեր-Գաւթեանց Արտ 20 Կ., վարդապարիկեանց Յակովբ 20 Կ., վարդապարիկեանց Յովսէփ 20 Կ., Տեր Ներսէսեանց Սենէքերիմ 20 Կ., Պարոնեանց Կարապետ 20 Կ., Պալեանց Համազասպ 20 Կ., Յովսէփեանց Թադէոս 20 Կ., Սաղաթէլեանց Արմենակ 25 Կ., Սաղաթէլեանց Յակովբ 20 Կ., Փայանձեանց Համազասպ 10 Կ., Գլխեանց Ալեքսան 15 Կ., Քոստանց Ներսէս 10 Կ., Նալբանդեանց Սարգիս 10 Կ., Գուկանեանց Սենէքերիմ 5 Կ., Ղազարեանց Արտաշէս 5 Կ., Նալբանդեանց Յովսէփ 5 Կ., Գուկար 17 Կ., 15 Կ., Նոյն զգրութիւն աշակերտաց փողը 12 Կ., 85 Կ., Ընդամենը 30 Կ.:

Աղէքսանդր Խանապրեանց, Մկրտիչ Ղազարեանց, Գարուի Վարդապարեանց

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ГОЛОСЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՆ-ՐԻ ՄԱՍԻՆ

«Голосъ» լրագրի № 199 մէջ տպւած է հետեւեալ թղթակցութիւնը Կ. Պոլսից:

Թիւրքերը չափազանց վրդովւած են նրանով, որ սուլթանի ամենաբարեմիտ քրիստոնեայ Հայաստանները՝ յոյները և հայերը, նրանք էլ այնչափ փշաղել են, որ հանգիստ չեն տալիս ներսպային իրանց բողոքներով: Բողոքադիմումները յետոյ, իրանց կարգին հասնելով, յոյները և հայերը չեն ննջում: Իրանց քարոզութիւնները և աշխատանքները կենտրոնը Թիւրքիայի մայրաքաղաքը ընտրելուց յետոյ, նրանք բոլոր ջանքերը դործ են դնում դործի աջող հետեւանքին հասնելու համար: Մի և նոյն ժամանակ յոյները և հայերը լաւ իմանում են, որ Թիւրքերը այժմ այնպիսի բողոքի մէջ են, երբ ձակաւոր վրա սառը քրտինք է երևում, որ մահուան տանջանքների նշան է: Այդ պատճառով նրանք այնչափ հաւատարմաբար և համարձակ են դործում, ինչպէս վաղեմի կալուածատիրոջ օրինակով ժառանգները:

Կեռ XIII դարից, այսինքն հայոց թաւաճողութեան վերջնական անկումից յետոյ, Հայաստանի քաղաքական ինքնաշարժութիւնը վերականգնելու ցանկութիւնը այնչափ մեծ է հայերի մէջ, որ նա մինչև անգամ կրօնադաւանական բնաւորութիւն է ստացել: Ներսէս Մեծի առաջարկութեան համեմատ հայ հոգեւորականութիւնը խոստովանեց, որ մահաբանական տիրապետութիւնը Հայաստանի մէջ ներսի դործ է, որի ձեռքին կը տանջվեն քրիստոնեաները մինչև այն ժամանակ, երբ սատանայի բոլոր ոյժերը կը ոչնչանան ձեռնուցի Ծնալիս: ձեռքով: Հոգեւորականութեան ջանքերով պահպանված այդ հաւատը առանձին ոյժ ստացաւ ժողովրդի մէջ վերջին ռուս-թիւրքական պատերազմից յետոյ, երբ ռուսաց բանակը տեղ բռնեց Կ. Պոլսից ետք վերստ հեռաւորութեամբ: Քրիստոնեական ազատութեան Թագաւոր Առաջնորդին հայերը համարեցին նոյն Ծնալիս, որի մասին ետք դար առաջ մարգարէացաւ իր ժողովուրդին Մեծ սուրբը: Առհասարակ հայ ժողովրդի պատմութեան ամենալաւ էջերը վիճակվում են հայ հոգեւորականութեանը, որոնք դործել են ոգևորված ազդարարութեամբ և անձնագոհութեամբ:

Այդ բարձրութեան վրա է գտնվում այժմ էլ հայ հոգեւորականութիւնը Թիւրքիայի մէջ, որտեղ նա ամենազորեղնայն գեր է կատարում ազգային ինքնազոյութեան ստեղծելու դործի մէջ: Հոգեւորականների հետ միասին նոյնքան եռանդով աշխատում է հայ ինտելիգենցիան և հայ երիտասարդութիւնը: Ամենամտ համերաշխութեամբ միմեանց հետ կապված, առաջնորդված փորձված քաղաքական դործողներով, Կ. Պոլսի մէջ գտնված Հայաստանի վիճակը կարգադրողները ամենահաւանգոտ յարաբերութիւններ ունեն մի կողմից ներսպայի քաղաքական և գրականա-

կան աշխարհի մեծ ազդեցութիւն ունեցող անձանց հետ և միւս կողմից Մեծ և Փոքր Հայաստանի ամբողջ ազգաբնակչութեան հետ: Այդ երկրի ամբողջ տարածութեան վրա մեծ քանակութեամբ ազգային ռուս-մարտնեի բացվեցան, որոնց իւրաքանչիւր օր այցելում են մօտ 50,000 երկսեռ երեխաներ:

Ժողովրդական ռուս-ցիւնները այնտեղ ուրիշ սլաշտոններ էլ են կատարում, ի միջի այլոց Կ. Պոլսի կենտրոնական խմբագրական մասնաժողովը թղթակցների պարտականութիւնները: Այնտեղ ուղարկվում են ամենամանրամասն անդեկութիւններ քերական կամ թիւրքերի իւրաքանչիւր հարստահարութեան և չարագործութեան մասին: Ժամանակագրական ձեռք նրանց դասաւորելով և կարգի բերելով, մասնաժողովը տպւում է նրանց առանձին գրք-քոյկներով Ֆրանսիայի լեզուով և տասնեակ հազար օրինակներով տարածում է ամբողջ ներսպայի մէջ:

Որովհետեւ պարսկական և եգիպտական կառավարութիւնների գլխավորական նշանաւոր պաշտօնները ներսպայի մայրաքաղաքների մէջ գրեթէ բացառապէս հայերն են վարում, այդ քաղաքագէտներն էլ իրանց կողմից մասնակից են լինում իրանց հայրենակիցների դործին: Ժամանակ առ ժամանակ նրանց զրէի տակից դուրս են գալիս լրագրական կամ ամսագրական այնպիսի յօդուածներ արեւելեան հարցի վերաբերութեամբ, որոնք կարգապահ հասարակական կարծիքի վրա մեծ ազդեցութիւն են դործում: Այդպիսի յօդուածներ են վերջին ժամանակներում Ֆրանսիական «Journal des Debats» և անգլիական «Standard» լրագրի մէջ տպվածները: Այդ երկու յօդուածներն էլ Ֆրանսիայի և Անգլիայի մէջ մեծ տպաւորութիւն դործեցին և Փարիզի Թիւրքաց ներկայացուցիչը շտապեց հեռագրել Կ. Պոլսի, «Journal des Debats» լրագրի համարների կալանաւորելու մասին, որը իր մէջ պարունակում էր «մեքեր թուաւորող» բովանդակութեան յօդուած: Չը նայելով դործադրած բոլոր միջոցներին Ֆրանսիական լրագրի համարները Բողոքիայի վրա անցան Թիւրքիա և մեծ քանակութեամբ տարածվեցին Կ. Պոլսի ազգաբնակչութեան մէջ:

Յայտի գլխավորական օրինակներից, ինչպէս են Նուբար-փաշա և Միրզա-Մեքլեւան խան, պարսկական գետապետ Լօդոնում, յետ չեն մնում հայ երիտասարդ գիտնականները ներսպայում: Ստանալով պրօֆեսորների ամբիօններ Բերլինի, Յիւրիխի, Վիեննայի, Վեների, Փարիզի և Օկսֆորդի մէջ, գիտութեան այդ մշակները իրանց թանգաղին ժամանակի մի մասը նուիրում են ազգային դործին, երբեմն մամուլի ներկայացուցիչներին անհրաժեշտ տեղեկութիւններ տալով Փոքր-Ասիայի և Հայաստանի մասին, երբեմն իրանց հետաքրքիր պաշտօնակիցներին ծանօթացնելով Արեւելքի և Հայաստանի մէջ պատահած դործերի հետ: Պրօֆեսորների օրինակին հետեւում են նրանց հայրենակից ռուսաւորները, որոնք վերջին ժամանակներում նախապատուվում են գերմանական համալսարանները, որտեղ այժմ 100 մարդու չափ հայ ուսանողներ կան:

Այսպիսով ազգային ազատութիւնը պատրաստելու համար կենտրոնացած են բոլոր ոյժերը, Արեւելքի երեք միլիոնաւոր ամենազարգացած ցեղի բոլոր հոգեկան և նիւթական միջոցները: Լրագրապետի գրելը, գլխավորապէս արհեստը, հրապարակաւ քարոզը, ամենամեծ զինուորական կողակը, այս բոլոր նուիրած է ընդհանուր դործին: Մինչև անգամ կանայք չեն հեռանում տղամարդկեանց դործին մասնակցելուց: վերջին սովի ժամանակ նուիրաւորութիւններ հաւաքելով գրող-ված էին բացառապէս կանայք, որոնք միայն Կ. Պոլսի մէջ մօտ 400,000 բուրջ հաւաքեցին:

Ընդհանուր համերաշխութիւնը աւելի ամրացնելու համար մի նոր ոյժ երևան եկաւ: հայ-կաթօլիկները, հայ-բողոքականների և հայ-ուսաւորականների կատարել հաշտութիւն է: Համաձայնութիւնը կատարված իրողութիւն է, որովհետեւ ներսէս պատրիարքը այդ ուղղութեամբ ինքը առաջին քայլն առաւ, ինքը իր սխիտայով առաջին պայմանները առաջարկեցին իր եղբայրական զգացմունքները յայտնելու համար: Արժանապատիւ պատրիարքը այդ վարմունքը մեծ տպաւորութիւն դործեց Կ. Պոլսի հայ հասարակութեան վրա, իսկ միւս օրը ներկայացան պատրիարքին կաթօլիկների և բողոքականների հօգեւորականները իրանց հօգեւոր օրդիկներն ահազին պատգամաւորութեան հետ:

ԹԻՒՐԿԻԱ

Լրագիրների մէջ կարգում են հետեւեալ տեղեկութիւնները:

Ամեն բան ապացուցանում է, որ Արեւելեան հարցը վաղուց նախատեսված և սպասված դժուարութիւնների հանդիպեց: Բ. Կրան պատասխանը պետութիւնների գրութեանը արդէն հրատարակված է և նոյն բովանդակութիւնը ունի, ինչ որ հարողում էին մի քանի ժամանակ առաջ տարածված լուրերը: Բ. Կրանը հրաժարվում է զիջել Յունաստանին Նանիս, Լարիսսա և Մետոքեփո և առաջարկում է բանակցութիւններ սկսել պետութիւնների հաւատարմատարների հետ Կ. Պոլսի մէջ: Երբեք Թիւրքական սահմանական զիծը և մի քանի երկրորդական հարցերը վերջնականապէս վճելու համար: Ֆրանսիական «Rappel» լրագրի հարողում լուրը Վիկտորիա թագուհուց սուլթանին ուղարկված նամակի մասին նոյնպէս հաստատեցաւ: Լօրդ Կրեյվիլ յայտնեց պարլամենտի մէջ, որ այդ նամակը անգլիական թագուհին զրել է կառավարութեան համաձայնութեամբ և որ նրա մէջ թագուհին յոյս է յայտնում, թէ սուլթանը մինչև անգամ մի քանի զոհարարութիւններ կանի և կը կատարի ներսպայի միաձայն ցանկութիւնը:

Բրիտանական թագուհու այդ յոյսը չը կատարվեցաւ: Արդու-Համիդ չը կատարեց անսահմանափակ թագաւորի պարտականութիւնը վիճելի հարցը վճելու համար: Նա յայտնեց անգլիական դեսպան պ. Գոշենին, որ իբրեւ սահմանադրական թագաւոր, հարցի վճելը յանձնում է Բ. Կրանը, իսկ այս վերջինի պատասխանը արդէն յայտնի է:

Այսպիսով այժմ էլ, ինչպէս 1877 թուականի Կ. Պոլսի կօնֆերանցիայի ժամանակ, առաջ է գալիս Թիւրքաց սահմանադրութիւնը: Մի անգամ խաղացված կատակը նորից երևան է գալիս, միայն մի քանի փոփոխութիւններով: Այս անգամ սուլթանը չէ համարձակվում պարլամենտ հրաւիրել համոզված լինելով, որ վերջին պատերազմից նուազած և աղքատացած Թիւրքիայի մէջ անկարելի կը լինի այնպիսի մարդիկ հաւաքել, որոնք մեծամասնութիւն կազմեն և պաշտպանեն այն քաղաքականութիւնը, որին այժմ հետեւում է Բ. Կրանը: Կ. Պոլսից ստացված վերջին լուրերից երևում է, որ սուլթանը չէ համարձակվում մինչև անգամ «ազգային» մեծ ժողով հրաւիրել, որովհետեւ Թիւրքաց աստիճանաւորներից անգամ, որոնցից մտադրված էր ժողով կազմել, մի մեծամասնութիւն չի կայանայ, որ հաւանք ներսպայի ընդդիմանալու միտքը: Այդ ընդդիմադրութիւնը այժմ խորհուրդ են տալիս միայն արեւելիները, որոնք այժմ շրջապատում են սուլթանին մինիստրների, բարձրաստիճան անձանց և այլն պաշտօններով: «Times» լրա-

գրի Կ. Պոլսի թղթակիցը հարողում է, որ սուլթանը անձնականապէս փնտնում է ալբանցիների անբաւականութեան հետեւանքները և այդ լուրը ձիւտ կարող է լինել, եթէ ի նկատի առնենք սուլթանի երկիւղը իր ապահովութեան համար: Այդ է պատճառը, որ սուլթանը այժմ իրան սահմանադրական թագաւոր է յայտնում և խոսում է Բ. Կրան մասին, որպէս զի, եթէ մի բան պատահի, պատասխանատուութիւնը այս վերջինի վրա ընկնի:

Գործերի այսպիսի դրութեան ժամանակ պետութիւնների համար անկարելի է դառնում դործը այն կարգով տանել, որ ընդունված է քաղաքակրթված կառավարութիւնների մէջ: Բանակցութիւնների ժամանակը անցել է, այժմ դործելու ժամանակ է: Բ. Կրանը այժմ կարող է սպասել միայն պետութիւնների վճռական գրութեանը, որով նրանք իրանց պահանջների կատարվելու ժամանակամիջոցը կը նշանակեն և կը յայտնեն, որ այդ ժամանակամիջոցի անցնելուց յետոյ Թիւրքաց ջրերի մէջ կերեայ պետութիւնների զինուորական միացեալ նաւատորմը: Գուցէ այդ ժամանակամիջոցը բաւական երկար կը լինի, որպէս զի Յունաստանը կարողաւայ իր զօրքերը կազմակերպել:

Եթէ նշանակված ժամանակամիջոցի մէջ Բ. Կրանը չի կատարի պահանջները, այն ժամանակ պետութիւններին կը մնայ իրագործել իրանց սպառնալիքը:

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ կարգում են հետեւեալ: Մի չար բողոք ծանրանում է անգլիական ազատամիտ կառավարութեան վրա: Կաղաւթոնի նոյն իսկ առաջին քայլերին դժուարութիւններ պատահեցան: Մի զբոսը ներքին անբաւականութիւններից յետոյ ազատահայեան Կանդահարի անցքերը և ապստամբութիւն հարաւային Աֆրիկայի մէջ: Այժմ այդ բոլոր դժուարութիւններին աւելանում է և Կլաքսոնի հիւանդութիւնը, որ բաւական վտանգաւոր պէտք է լինի, որովհետեւ հեռագիրը հիւանդութեան մանրամասները չէ հարողում:

Անգլիական Թիւրքասերները, որոնք չափազանց անբաւական են Անգլիայի արեւելեան քաղաքականութեան փոփոխութեամբ, այժմ ուրախանում են Կլաքսոնի հիւանդութեան պատճառով յուսալով, որ այդ հիւանդութիւնը միջոց կը տայ անգլիական կառավարութեանը շարունակել իր եռանդոտ արեւելեան քաղաքականութիւնը:

Բայց եթէ անգլիական պահպանողականները կարծում են, որ Կլաքսոնի հիւանդութիւնը, կամ մինչև անգամ մահը կարող է փոփոխել արեւելեան անցքերի ընթացքը, նրանք չափազանց պատրուած են: Արեւելեան հարցի առիթով այժմեան մինիստրութեան անդամների մէջ կատարել համաձայնութիւն է տիրում: Սկսված եւրոպական ծրուածքի Բ. Կրան վրա նոյնքան լօրդ Կրեյվիլի, մարիլի շարտիքագետի և պ. Բայտի դործ է, որքան պ. Կլաքսոնի: Բանի որ կառավարական զեկը ազատամիտների ձեռքին կը լինի, ով ուղում է լինի մինիստրութեան առաջնորդը, բրիտանական կառավարութեան նախագիծը Բ. Կրան վերաբերութեամբ չի փոփոխվի:

Եթէ մինչև անգամ Անգլիան յետ կանգնի իր բռնած ընթացքից, հազիւ թէ դրանով նա կարողանայ ազդել պատրաստվող անցքերի վրա: Արդէն ներսպայի հաշտվել է այն մտքի հետ, որ պէտք է ստիպել Թիւրքաց կառավարութեանը յետ կանգնել մինչև անգամ վերականգնելու կարող է լինել Թիւրքիայի համար:

Բայց իսկապէս Անգլիայի համար Կլաքսոնի մահը անփոխարինելի կորուստ կարող է լինել: Բացի այն, որ Անգլիան կը կորցնէր մի համաժառուր ֆինանսիստ, որ կարողանում է կարգի բերել անգլիական խառնված ֆինանսները, ազատամիտները կը կորցնեն նրա մէջ մի այնպիսի առաջնորդի, որ միակ կարողանում է յաղթել չափաւոր ազատամիտների յամառութեանը ներքին վերանորոգութիւնների դործի մէջ:

